


Գ

ՏՈՒՐՆԵԼԻ ՊԱԼԱՏԸ



եր պատմութեան համար կարեւոր՝ թագաւորական Տուրնէլ անուն պալատն ալ կը գտնուէր Ս. Պօղոսի պալատին ճիշտ դիմացը, եւ անկէ կը բաժնուէր Սէն'ա-Անտուան փողոցով. մուտքն ալ նոյն փողոցին վրայ էր (1):

Պալատին « Տուրնէլ » (Tournelles—աշտարակիկը) կոչուելուն պատճառն այն է, որ բազմաթիւ փոքր աշտարակներով շրջապատուած էր ան: Իսկ շէնքը տակաւին պալատի չվերածուած՝ Պարիսի եպիսկոպոս եւ արքունի դպրապետ Pierre d'Orgemont-ի տունն էր, զոր վաճառեց 1404-ին Բեռտի դքսին, որ 1422-ին փոխանակեց Օռլէանի դքսին պալատին հետ(2): Անկէ ետքը թագաւորներու բնակարան դարձաւ պաշտօնապէս, Կարոլոս 5-է սկսելով մինչեւ Կարոլոս 8 (3): Բայց այս պալատին մէջ Հանրի Բ-ին պատահած դժբախտութեան եւ մահուան պատճառով՝ իր կիսը, Կատարինէ թագուհին, բարկութենէն՝ 1565-ի օգոստոսին՝ քանդել տուաւ զայն. գետինն ու աստղճները ծախուեցան մասնաւոր անհատներու, որոնք նոր շէնքեր կառուցանելով՝ գրաւեցին նախկին փառաւոր պալատին տեղը, որուն կեդրոնն ընդարձակ հրապարակ մը թողուցին միայն՝ կոչելով Արֆուրի հրապարակ (Place royale) (4): Այս հրապարակը՝ որ այսօր Place des Vosges անունով կը ճանչցուի, երկաթէ վանդակներով շրջապատուած է. կեդրոնը կայ Լուզովիլոս ԺԳ-ի ձիւղոր մէկ արձանը: Հրապարակը Սէն'ա-

(1) Անդ, եր. 424 : — E. de Ménéval. *Les Jésuites de la Rue St-Antoine, l'Église St-Paul-St-Louis et le Lycée Charlemagne*. Paris, 1872, եր. 6 :

(2) Piganiol, Անդ, եր. 424 :

(3) Անդ, եր. 425 :

(4) Le Maire, *Paris ancien et nouveau*. Paris, 1685, fis. Գ, եր. 312 :